ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

N << ՀՀՏՄ-ԳՀԾՁԲ-25/02>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՊՊԱ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Իջևան << 26 >> դեկտեմբերի 2024թ.

Ժամը 14:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ՝ Թերեզա Սաֆարյան

Անդամներ՝

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ՝ Գարիկ Մելքումյան

աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ՝ Սիրանուշ Չիբուխչյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ՝ Աննա Մանգասարյան

1.Հայտերի բացման վայրը, օրը, ժամը.

<<ՀՀՏՄ-ԳՀԾՁԲ-25/02>> ծածկագրով ԳՀ ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am համակարգի միջոցով ք.Իջևան, Սահմանադրության 1 հասցեում, 2024թ. դեկտեմբերի 26-ին, ժամը 14^{00}:

2.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գնային առաջարկները.

Գնային առաջարկ ներկայացրել են հետևյալ մասնակիցները:

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հասցե	ՀՎՀՀ	Չափաբաժիններ
1	<<Լիգա Ինշուրանս >> ԱՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Հս. պող. 1	02589581	1-2
2	<<Արմենիա Ինշուրանս>> ԱՓԲԸ	ՀՀ, ք: Երևան, Հս. պող. 10	02574465	1-2

Չափաբաժնի համար	հ/հ	Ընկերություն	Նախահաշվ. գին	Գնային առաջարկ		
				Արժեք	ԱԱՀ	Գին
1	1	<<Լիգա Ինշուրանս >> ԱՓԲԸ	40000	AMD 28000	0	AMD 28000/քսանութ հազար/
	2	<<Արմենիա Ինշուրանս>> ԱՓԲԸ		AMD 41000	0	AMD 41000/քառասունմեկ հազար/
2	1	<<Լիգա Ինշուրանս >> ԱՓԲԸ	40000	AMD 28000	0	AMD 28000/քսանութ հազար/
	2	<<Արմենիա Ինշուրանս>> ԱՓԲԸ		AMD 37000	0	AMD 37000/երեսունյոթ հազար/

Տվյալներ հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

Մասնակիցներից Լիգա Ինշուրանս ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում կան անհամապատասխանություններ Հրավերի պահանջներին.

1. Հավելված 1-ում ընթացակարգի չափաբաժինների թիվը գրված է միայն 2-ը, սակայն գնային առաջարկ ներկայացված է և 1-ին, և 2-րդ չափաբաժինների համար:
2. Հավելված 1-ում դիմողը համաձայն օրինակելի ձևի պետք է գրված լինի տնօրենի անուն, ազգանունը և պաշտոնը:
3. Բացակայում է տնօրենի կողմից տրամադրված լիազորագիրը՝ փաստաթղթերն այլ անձին ստորագրելու թույլտվության մասին:
4. Իրական շահառուների տվյալները Հրավերի պահանջներից ելնելով պետք է ներկայացվեր:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը՝ ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի կարիքների համար կազմակերպված «ՀՀՏՄ-ԳՀԾՁԲ-25/02» ծածկագրով "ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԱՊՊԱ" ձեռքբերման մրցույթի գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով, վերոնշյալ անճշտությունների շտկման համար:
2. Լիգա Ինշուրանս ԱՓԲԸ, եթե մեկ աշխատանքային օրում չշտկի անհամապատասխանությունները հայտը կմերժվի:
3. Ծանուցումն ուղարկել բոլոր մասնակիցներին՝ հայտով նշված էլեկտրոնային հասցեներին, ինչպես նաև արմեպս ծրագրով:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝ Թ. Սաֆարյան

Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Մելքումյան

Ս. Չիբուխչյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մանգասարյան